



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄԻ ԱՐԱԲԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նարեկացու անմահ «Մատեանը», որն իր պատվավոր տեղն ունի համաշխարհային գրականության գանձարանում, արդեն բազմիցս ներկայացվել է օտար ընթերցողին՝ ինչպես հայ, այնպես էլ օտարազգի թարգմանիչների ջանքերով: Անցյալ դարի 60-ական թվականներից սկսած, հրապարակ են իջել արևմտյան և արևելյան մի շարք լեզուներով մասնակի և ամբողջական, չափածո և արձակ, հրատարակված և անտիպ մոտ երկու տասնյակ թարգմանություններ (իտալերեն, ֆրանսերեն, ռումիներեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն և այլն)¹:

Պոեմն առաջին անգամ արաբերեն է թարգմանվել 1880-ական թվականներին, գրաբար բնագրից, Հալեպում, Սարգիս Սապպաղյանի և Հակոբ-նան Ֆեթթելյանի կողմից: Թարգմանությունն արձակ է, անտիպ (557 թերթ), և Ա. Սյուրմեյանի կողմից բնորոշվել է հետևյալ կերպ. «Թէև նորութիւն մը իր տեսակին մէջ, բայց մեզի հաւաստեցին որ կատարուած թարգմանութիւնը յաջող չէ եւ թէ արաբերէնը, իբր լեզու քաջ չէ»²:

Եվ ահա այժմ, ավելի քան մեկ հարյուրամյակ անց, արաբ ընթերցողի սեղանին է դրված մի նոր արաբերեն թարգմանություն՝ իրականացված այս անգամ արդեն ոչ թե հայ, այլ արաբ թարգմանչի կողմից: Թարգմանությունը լույս է ընծայվել «Հոգևոր ժառանգություն» մատենաշարով³, թարգմանիչն է Հիսուսյան միաբանության⁴ անդամ հայր Ժորժ Աբլը (1911—1987)⁵:

¹ Նշված թարգմանությունների մասին ավելի մանրամասն տես **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 225—228, ինչպես նաև Григор Нарекаци, Книга скорбных песнопений, пер. с древнеармянского и коммент. М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян, вступ. статья С. С. Аверинцева, М., 1988, с. 8—9.

² **Ա. Սիւրմէան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալեպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ եւ մասնատրաց, Երուսաղէմ, 1935, էջ 398 (№ 34):

³ Նույն մատենաշարով լույս են ընծայվել նաև վեց այլ թարգմանություններ՝ կատարված հիմնականում ասորերենից և ֆրանսերենից (Ս. Ավգուստինոսի երկերից մի քանիսը, արևելյան հիմներգություններ, հոգևոր ուղերձների ժողովածու և այլն):

⁴ Հիսուսյան միաբանությունը հիմնվել է Փարիզում 1540 թ., Ս. Իգնատիոս դը Լոյոլայի կողմից: Ներկայումս միաբանությունն ունի տարբեր ազգությունների պատկանող 25.000 անդամ ողջ աշխարհում: Միաբանությանն են պատկանում աշխարհի տարբեր երկրներում սփռված համալսարաններ, գիտական կենտրոններ, նույնիսկ աստղադիտարան՝ Չիկաստանում և այլն:

⁵ Հայր Ժորժ Աբլի մասին մեր ունեցած տեղեկությունները շատ սուղ են և սահմանափակվում են նույն՝ Հիսուսյան միաբանության անդամ հայր Սահակ վարդապետ Քեշիշյանի հաղորդած տվյալներով: Ժորժ Աբլը ապրել է և աշխատել Բեյրութում, Ղազիրում և որոշ ժամանակ Հալեպում: Եղել է քարոզիչ, դասավանդել է ասորերեն, նաև բեմադրել է մի շարք արաբական դասական կրոնական գործեր (դպրոցներում և այլն):

Ափսոսանքով պետք է նշել, որ արաբերեն թարգմանությունը կատարվել է «Նարեկի» ոչ թե գրաբար բնագրից, այլ ֆրանսերեն թարգմանությունից (թարգմանիչ Սահակ Քեշիշյան)⁶ և ավարտին չի հասցվել Ժորժ Աբլի մահվան պատճառով. պոեմի 95 գլուխներից («բանք») թարգմանված են ընդամենը 27-ը, այն է՝ Ա—Ի, ԻԵ, ԽԳ, ԾԹ, ՀԷ, Զ, ԴԴ: Թարգմանությունն ունի արաբերեն նախաբան (էջ 7—11) և ֆրանսերեն վերջաբան (էջ 180—184), որոնց հեղինակն է Սահակ Քեշիշյանը:

Նախաբանում չափազանց համառոտ հիշատակվում են «Մատենանի» հետևյալ թարգմանությունները՝ ֆրանսերեն (Սահակ Քեշիշյան), անգլերեն (Միշա Կուդյան), ռուսերեն (Նաում Գրեբնև, Լեոնիդ Միլ, Վլադիմիր Միկուշևիչ, Մարգարիտ Դարբինյան և Լենա Խանլարյան), ինչպես նաև Պողոս Խաչատրյանի և Արշալույս Ղազինյանի աշխատասիրությամբ հրատարակված բնագիրը: Թողոցիկ նշվում է նաև, որ Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում նախատեսվում է թարգմանել պոեմը նաև վեց այլ լեզուներով, իսկ Արգենտինայում ավարտին է հասցվել նրա իսպաներեն թարգմանությունը:

Արաբերեն նախաբանում ներկայացված է նաև Գրիգոր Նարեկացու հակիրճ կենսագրությունը, թվարկված են նրա հեղինակած մյուս երկերը, ինչպես նաև երկու խոսքով բնութագրված է «Մատենան ողբերգութեան» պոեմը:

Ֆրանսերեն վերջաբանը բաղկացած է նույն ենթաբաժիններից, սակայն փոքր-ինչ ավելի ընդարձակ է և եզրափակվում է ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլորիեի խոսքերով, որը միջնադարյան համաշխարհային գրականության մեջ տեսնում էր միայն երկու գագաթ՝ «Սուրբ Թովմաս Աբվի-նացի և Սուրբ Գրիգոր Նարեկացի»:

Հարկ է նշել սակայն, որ նախաբանում առկա են նաև որոշ անճշտություններ և թերացումներ. այսպես, օրինակ, Նաում Գրեբնևի անունը ինչպես արաբերեն, այնպես էլ լատիներեն տառադարձությամբ ունի հետևյալ աղավաղված տեսքը՝ Nahum Grubenief, իսկ Մ. Դարբինյան-Մելիքյանի ազգանունը լատիներեն տառադարձված է հետևյալ կերպ՝ Derbinian: Բացի այդ, ոչինչ չի ասվում այն մասին, որ «Մատենան» արաբերեն է թարգմանվում փաստորեն արդեն երկրորդ անգամ, իսկ թարգմանիչ Ժորժ Աբլի մասին շատ հպանցիկ նշվում է հետևյալը՝ մահվան տարեթիվը, նրա թարգմանած աղոթքների թիվը, այն, որ թարգմանությունը նրա՝ տարիների աշխատանքի արդյունքն է, և որ թարգմանությունն արվել է ֆրանսերենից: Ոչինչ չի ասվում Ժորժ Աբլի ո՛չ կյանքի, ո՛չ թարգմանչական կամ այլ բնության գործունեության մասին. ուրիշ ի՞նչ թարգմանություններ է նա արել, ունի՞ արդյոք սեփական ստեղծագործություններ (հրատարակված կամ անտիպ), որքանո՞վ է նա ծանոթ եղել հայ միջնադարյան գրականությանը, ինչպե՞ս է վերաբերվել նրան և այլն: Մինչդեռ ինչպես արաբ, այնպես էլ հատկապես, հայ ընթերցողին և առավել ևս հայ-արաբական գրական կապերի հայ ուսումնասիրողին նման հարցերը, անշուշտ, կհետաքրքրեն: Ցանկալի կլինեք, եթե նշված դիտողությունները հաշվի առնվեին «Նարեկի» արաբերեն թարգմանության գոնե հետագա վերահրատարակությունների ժա-

⁶ Գոյություն ունեն «Մատենանի» ֆրանսերեն մի շարք թարգմանություններ՝ ինչպես հատվածաբար (Ֆելիքս Նև, Արշակ Չոպանյան, Լյուկ Անդրե-Մարսել, Դյուդ Ժան-Պիեռ Ֆե), այնպես էլ ամբողջական (Սահակ Քեշիշյան և Ժան-Պիեռ Մահե): Սահակ Քեշիշյանի թարգմանությունը փաստորեն «Նարեկի» առաջին ամբողջական ֆրանսերեն թարգմանությունն է: Ինչ վերաբերում է Ժան-Պիեռ Մահեի թարգմանությանը, ապա վերջինս պետք է որ արդեն հանձնված լինի տպագրության:

մանակ, որպեսզի հնարավոր լիներ ավելի ամբողջական պատկերացում կազմել ինչպես թարգմանչի, այնպես էլ նրա կատարած թարգմանության մասին:

Սակայն նշված փոքրիկ անկատարությունները, իհարկե, ամեննին չեն նվազեցնում այն ողջունելի, կարևորագույն և չափազանց շնորհակալ գործի արժեքը, որ կատարվել է՝ արար ընթերցողին ներկայացնելով հայ միջնադարյան գրականության մեծագույն գանձերից մեկը:

Ինչ վերաբերում է արաբերեն թարգմանության լեզվին և ոճին, ապա այն չափազանց բարեխիղճ և հարազատ կերպով վերարտադրում է Ս. Քեշիշյանի⁷ ֆրանսերեն թարգմանությունը: Նույնիսկ ավելին՝ քանի որ ֆրանսերեն թարգմանությունը չափածո է (գրաբար բնագրի տողերն այստեղ «կտրատված» և ուղղանկյուն են), ապա արաբերենում էլ գտնում ենք ճիշտ նույն պատկերը: Արաբերենով չափազանց գեղեցիկ է հնչում հատկապես պոեմի առաջին գլուխը. զգացվում է, որ թարգմանիչը երկար ու մանրակրկիտ հղկել, կարելի է ասել՝ կատարելության է հասցրել թարգմանության լեզուն, որը և հնարավորություն է տվել արաբերենով հաղորդել Նարեկացու բանաստեղծական հանճարի փայլն ու ոգին:

Թեև թարգմանության որոշ առանձին հատվածներում նկատվում են դեպքեր, երբ ոչ թե անմիջապես բնագրից, այլ երկրորդ լեզվից թարգմանված լինելն իրեն զգացնել է տալիս (այսպես, օրինակ, երբ ֆրանսերեն նախադասության մեջ առկա որևէ մակդիր արաբերեն թարգմանության մեջ վերագրված է նախադասության ոչ այն անդամին, քանի որ ֆրանսերենի առանձնահատկություններից ելնելով այն կարելի է վերագրել և՛ այս, և՛ այն անդամին), այնուամենայնիվ արաբերեն թարգմանությունն անտարակույս հաջողված է, և մնում է մեծ ափսոսանք հայտնել, որ թարգմանիչ Ժորժ Աբլը կյանքից հեռացել է առանց ավարտին հասցնելու «Մատեանի» ամբողջական թարգմանությունը: Ո՛վ կլինի արդյոք այդ շնորհակալ և դժվարին գործի շարունակողը՝ նույն պատշաճ մակարդակով:

Հայ-արաբական գրական կապերը գալիս են դարերի խորքից և միշտ ունեցել են դրսևորման երկու ձև՝ փոխհարաբերությունները քրիստոնյա ա-

⁷ Հայր Սահակ վարդապետ Քեշիշյանը ծնվել է 1917 թ., Մարաշում, այնուհետև ապրել է Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում: Կրթությունն ստացել է նախ Դամասկոսի Հիսուսյան Հայրերի «Ֆրանսահայ Վարժարանում», ապա Բեյրութի Արևելյան Նորընծայարանում (Հիսուսյան Հայրերի Սեն Ժոզեֆ համալսարանին կից): 1936-ին Ֆրանսիայում դարձել է Հիսուսյան միաբանության անդամ, ուր և ուսանել է: Ուսումնասիրել է ֆրանսերեն, լատիներեն, հայերեն (գրաբար և աշխարհաբար): Ստրասբուրգի համալսարանի Արևելյան լեզուների և գրականության բաժնում գրաբար ուսումնասիրելիս աշակերտել է պրոֆ. Յ. Կարստին: Արժանացել է փիլիսոփայության ասպարեզում Licence en philosophie. իսկ աստվածաբանության մեջ՝ Licence en Théologie տիտղոսներին:

Զբաղվում է մանկավարժական և հատկապես թարգմանչական գործունեությամբ: Դասավանդել է հայ հին մատենագրություն Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանի Արևելյան լեզուների հաշագիտության ամբիոնում: Նրա հրատարակած թարգմանությունների թվում են, բացի Նարեկացու «Մատեանից», նաև Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի Հօր Միածին» և «Ողբ Եղեսիոյ» պոեմների ամբողջական ֆրանսերեն թարգմանությունները, ինչպես նաև նույն բանաստեղծի հետևյալ աղոթքներն ու շարականները՝ «Հաւատով խոստովանիմ», «Առաւօտ լուսոյ», «Լոյս, արարիչ լուսոյ», «Աստվածատունկ խնկաբեր ծառ», «Յիշեցուք ի գիշերի զանուն քո Տէր», «Աշխարհ ամենայն», «Նայեաց սիրով Հայրն գթած», Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք»-ը, ինչպես նաև մի շարք դեռևս անտիպ թարգմանություններ:

րաբների և մահմեդական արաբների հետ: Այդ բազմադարյան գրական առնչությունների արդյունքն են հանդիսանում մի շարք թարգմանական հուշարձաններ, ընդ որում թարգմանություններ արվել են թե՛ արաբերենից հայերեն, թե՛ հայերենից՝ արաբերեն:

Այսպես, քրիստոնյա արաբների հետ հայերի ունեցած փոխհարաբերությունների արդյունքն է հանդիսանում արաբերենից կատարված հայերեն հնագույն թարգմանությունը՝ Նանա Ասորու կազմած «Հովհաննու Ավետարանի մեկնությունը» (մոտ. 840 թ.): Իրենց հերթին քրիստոնյա-արաբական միջավայրում հայերենից արաբերեն են թարգմանվել հայ մատենագրության մի շարք հուշարձաններ՝ «Գրիգոր Լուսավորչի Վարքը», որի հայերեն բնագիրն առ այսօր մնում է անհայտ, Ագաթանգեղոսի «Պատմությունը», Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»: Հայտնի են նաև նույն միջավայրում և նույն ճանապարհով կատարված որոշ քրիստոնեական-կրոնական բնույթի թարգմանություններ, ինչպես, օրինակ, «Թուղթ կորնաթցոց առ Պաղոս և Պաղոսի առ կորնթացիս» և այլն: Ըստ Ն. Մառի, «Հայերենից արաբերեն թարգմանությունների ի հայտ գալը, մասնավորապես, կարելի է բացատրել, թերևս, նրանով, որ ուշ շրջանում արաբերենն ասորիների համար ծառայում էր որպես գրական լեզու, իսկ հակոբիկ-ասորիները և հայերը գտնվում էին սերտ հաղորդակցման մեջ»⁸: Մառի հետ համակարծիք է նաև Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, որն իրավացիորեն քրիստոնյա արաբների (այսինքն՝ հիմնականում արաբախոս ասորիների) հետ հայերի ունեցած առնչությունները դիտում է որպես ասորա-հայկական բազմադարյան գրական կապերի ավանդույթի շարունակությունը⁹:

Ինչպես տեսնում ենք, այդ հիմնավորց ավանդույթը շարունակվում է և մեր օրերում, և այդ իմաստով Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմի արաբերեն թարգմանությունը հանդես է գալիս որպես մի նոր, կարևոր օղակ հայ-քրիստոնյա արաբական գրական կապերի շղթայում:

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՅԱՆ

⁸ Н. Я. Марр, К вопросу о переводах с армянского на арабский язык. Записки Восточного отделения (имп.) Русского археологического общества, т. XIII, СПб., 1900, с. 35.

⁹ А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 265—267.

